



## Սևանա լճում ծկան և խեցգետնի որսը խստիվ արգելվում է



### Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի հրամանը:


Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի «է») կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ կետի «ա») ենթակետով և 12-րդ կետի «դ») ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N2459-191 գրությունը՝ սույն թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ստորագրել է հրաման, որով արգելվել է 2017թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2018թ. հունվարի 15-ը Սևանա լճում ծկան և խեցգետնի որսը, ինչպես նաև ուժեղացվել հսկողությունն ապօրինի ձկնորսության և ձկնային պաշարների պահպանության ուղղությամբ:

Հրամանում ասված է.

«1. Իշխան և Սիգ ձկնատեսակների ձկադրման ժամանակահատվածում ձկների բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով 2017 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2018 թվականի հունվարի 15-ն ուժեղացնել հսկողությունը Սևանա լճում ապօրինի ձկնորսության և ձկնային պաշարների պահպանության ուղղությամբ:

շարունակությունը էջ 2 |

2017թ. դեկտեմբերի 20-ից  
մինչև 2018թ. հունվարի 15-ը  
արգելվել է Սևանա լճում  
ծկան և խեցգետնի որսը



## • Սևանա լճում ձկան և խեցգետնի որսը խստիվ արգելվում է

Սկիզբը էջ 1 /

**2.** Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

**1)** մինչև սույն թվականի դեկտեմբերի 19-ն ապահովել Սևանա լճից ձկնորսության և խեցգետնորսության համար նախատեսված բոլոր որսագործիքների, լողամիջոցների ինչպես նաև ժամանակավոր կացարանների դուրս բերումը,

**2)** շրջիկ հսկողություն իրականացնել Սևանա լճի առափնյա տարածքներում և գետաբերաններում,

**3)** կազմակերպել ստուգայցեր Սևանա լճի վրա՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ըն-

դերքի տեսչական մարմնի, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ոստիկանության, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի և համայնքների ղեկավարների հետ:

**3.** Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին առաջարկել՝

**1)** կազմակերպել ստուգայցեր Սևանա լիճը գոտևորող մայրուղիներում, քաղաքային շուկաներում, Սևանա լիճ թափվող գետերի վրա,

**2)** ապահովել մասնակցությունը սույն հրամանի 2-րդ կետում նախատեսված աշխատանքներին»:

Մոբիլիզացվում են բոլոր ուժերը՝ Սևանում ձկնագողությունը կանխելու համար

Բազմակողմ ֆննարկում՝ Սևանա լճում ձկան և խեցգետնի որսի արգելի միջոցառումների վերաբերյալ



Օրերս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում կայացել է աշխատանքային խորհրդակցություն, որի ժամանակ քննարկվել են Սևանա լճում ձկան և խեցգետնի որսի արգելքի ժամանակահատվածում ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրականացնելիք համատեղ միջոցառումները և նախատեսված փոխգործակցության մեխանիզմները:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, ՀՀ ոստիկանապետի տեղակալ, գեներալ Սամվել Հովհաննիսյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Եղիշ Տերտե-

րյանը, «Սևան» ազգային պարկի տնօրեն Վահե Գուլանյանը, պատասխանատու գերատեսչությունների ստորաբաժանումների և Սևանա լճի հարակից համայնքների ղեկավարները: Սույն թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ստորագրել էր հրաման, որով արգելվել է 2017թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2018թ. հունվարի 15-ը Սևանա լճում ձկան և խեցգետնի որսը, ինչպես նաև ուժեղացվել է հսկողությունն ապօրինի ձկնորսության և ձկնային պաշարների պահպանության ուղղությամբ: Խորհրդակցության ժամանակ նախարար Արծվիկ Մինասյանը ներկայացրել է հրամանագրով սահմանված, ինչպես նաև՝ եռակողմ միջոցառումների ծրագիրով նախատեսված գործողությունները և համոզմունք հայտնել, որ շահագրգիռ բոլոր կողմերի համատեղ աշխատանքներն արդյունք կտան, նախատեսված կանխարգելիչ քայլերը կհաջողեն և 2018 թվականին Սևանում ձկնային պաշարները կավելանան: Նա նշել է, որ 2016թ. իրականացված արգելքի միջոցառումները, շնորհիվ նաև տեղի բնակիչների ըմբռնողական մոտեցման, 70-80 տոկոսով հաջողվել են, ինչը փաստում է արդեն 2017 թվականին ձկան պաշարների ուսումնասիրության արդյունքները: «Կոչ են անում բոլոր կողմին, այդ թվում՝ Սևանի ափարձ համայնքների ղեկավարներին, որպեսզի սիգի վերարտադրության շրջանում բացառվի ձկան որսը, որպեսզի ողջ գործընթացն առնվի բավարար վերահսկողության տակ:

# • Մոբիլիզացվում են բոլոր ուժերը՝ Սևանում ձկնագողությունը կանխելու համար

Սկիզբը էջ 2 /

Շատ ցանկալի է, որ բացատրական աշխատանքի միջոցով կարգավորվեն բոլոր խնդիրները, հակառակ դեպքում լինելու ենք չափազանց խիստ: Պատասխանատվության կենթարկվի ոչ այն ձուկ վաճառողը, այլ նաև ձկնորսն ու մյուս անձինք, որոնց միջոցով ձուկը հայտնվել է շուկայում կամ վաճառքի այլ կետերում, իսկ պատժիչ գործողությունների մասին հանրությանը կտրվի համապատասխան տեղեկատվություն»,- շեշտել է Արծվիկ Մինասյանը: Խորհրդակցությանը մասնակցող համայնքապետերը այս տարի նույնպես պատրաստակամություն են հայտնել շարունակել բացատրական աշխատանքները համայնքի բնակիչների հետ: Ըստ նախարար Արծվիկ Մինասյանի՝ եթե ձվադրման շրջանի արգելքն հաջող իրականացվի, ապա հնարավոր կլինի անցնել կարգավորվող արդյունագործական որսի և յուրաքանչյուր ցանկացող կկարողանա իրացնել ձուկ որսալու իր իրավունքը, որի նպատակը կլինի ձկնային պաշարների կայուն աճը, այլ ոչ թե ապօրինի որսի լեգալացումը: Գե-

ղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը նշել է, որ ձկան որսի արգելքը բխում է նաև ժողովրդի շահերից: Այն կնպաստի ձկան պաշարների ավելացմանը: Մարզպետարանը միացել է այդ գործողությունների լիարժեք իրականացմանը: «Լինելու ենք խիստ և հետամուտ բոլոր դեպքերի բացահայտմանը: Գործելու ենք ոչ միայն մարզի, այլև ամբողջ հանրապետության տարածքով: Խախտումներ հայտնաբերելու դեպքում գնալու ենք մինչև վերջ՝ պարզելու, թե ով է կատարել որսը, ով՝ տեղափոխությունը կամ միջնորդավորված վաճառքը»,- նշել է ԳՅ ոստիկանության պետի տեղակալ Սամվել Գովհաննիսյանը: ԳՅ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Եղիշ Տերտեռյանը նշել է, որ տեսչական մարմնի բոլոր ռեսուրսները լիարժեքորեն ներգրավվելու են եռակողմ միջոցառումների իրականացման գործընթացում: Խորհրդակցության ժամանակ ԳՅ բնապահպանության նախարարը պատասխանել է նաև համայնքների ղեկավարների բարձրացրած հարցերին:



## ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Եղիշ Տերտեռյանի և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի սնօրեն Բարդուխ Գաբրիելյանի կարծիքները Սևանում ձկան որսի արգելման վերաբերյալ:

...«Այսօր թեև ձկնապաշարի ավելացման միտում կա, բայց առկա անկառավարվող որսի պարագայում չունենք այն լավ բարձր ցուցանիշային պատկերը, որ կարող էինք ունենալ: Ուստի պետք է ապահովել ոչ արդյունագործական մանրամասն պահպանությունը Սևանա լճում: Եթե կարողանանք դա իրականացնել, ապա կունենանք այն պոտենցիալը, որը հաջորդ տարվա համար կտա ձկնապաշարների թվի զգալի ավելացում»: Այս կարծիքին է ԳՅ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանը, ով լրագրողների հետ հանդիպման ժամանակ շեշտեց, որ միայն այս ճանապարհով և կառավարվող ձկնորսության պարագայում կշարունակենք ունենալ բարձր ցուցանիշներ թե՛ սիգ ձկնատեսակի պաշարների, թե՛ Սևանա լճում այլ կենդանական աշխարհի (խեցգետիններ, այլ ձկներ) պարագայում:

...ԳՅ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետի տեղակալ Իգոր Սարգսյանի խոսքով էլ այսօր ողջ ԳՅ տարածքով մեկ խիստ հսկողություն է սահմանված ձկնատեսակների վաճառքի կետերում, եթե զրանցվում են խախտումներ, այդ վաճառվող ապրանքը առգրավվում է, արվում է հետագա հետաքննություն, և այդ ապրանքի հե-

տագա ընթացքը որոշողը քննչական մարմինն է:  
...Դուք ասացիք եթե գտնում ենք խախտումներ, առգրավվում ենք ձկնատեսակը, ինչ փաստաթղթեր են այսօր անհրաժեշտ, որպեսզի դա չհամարվի խախտում, և ով է այդ փաստաթղթերը տվող մարմինը հարցին ի պատասխան Իգոր Սարգսյանն ասաց, որ նախ խոսքը գնում է արգելված, անօրինական որսի մասին, մինչ այս ոչ մի նման պայմանագիր չի կնքվել, ուստի եթե այժմ չլինեն այդ պայմանագրերը, խոսքը գնում է ապօրինի որսի մասին:  
...Պայմանագրերը կնքվում են և տրվում Բնապահպանության նախարարության կողմից: Որպեսզի չխոսվի, թե սիգի որսն է արգելվել, բայց խեցգետին և այլ ձկնատեսակ կարելի է որսալ, այժմ ընդհանրապես արգելվել է լիճ մտնելը: Ուստի վաճառքի կետերում սիգ չպետք է լինի, եթե հայտնաբերվեց, դա առգրավվելու է:

Haynews.am-ի հարցին, իսկ երբվանից են գործելու այդ արգելքները, բանախոսը պատասխանեց, որ սույն թվականի դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 15-ը գործելու է այդ ընթացքը և խիստ վերահսկողությունը Սևանա լճում որսի վերաբերյալ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ԱՆՏԱՌԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**



Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՂ-174-Ն հրամանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի 13.3-րդ կետը՝ ո ռ ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում ստեղծել ամտառային պետական կոմիտե՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ եռամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆ**

2017թ. Դեկտեմբերի 19  
Երևան

Կառավարությունում քննարկվել են հարցեր Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը վերաբերյալ

**ՆՊԱՍՏԵԼ ԲԻԳՆԵՍԻ  
ԳԱՐԳԱԾՄԱՆՆՂ՝ ԶՈՒՐՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ**



Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում ներկայացվել են Արարատյան դաշտում ձկնաբուծական տնտեսությունների կողմից ջրային ռեսուրսների պահպանության նկատմամբ ուսումնասիրությունների արդյունքներն ու ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգման ուղղված միջոցառումները:

Ձեկուցվել է, որ Արարատի և Արմավիրի մարզերի ջրային ռեսուրսների փաստացի վիճակի պահպանության նկատմամբ ուսումնասիրություն է իրականացվել 239 ձկնաբուծական տնտեսությունների 584 խորքային հորերի նկատմամբ: Նշված ձկնաբուծական տնտեսություններից գործում է 124-ը, 160 ձկնաբուծական տնտեսություն ունի ջրօգտագործման թույլտվություն (ՁԹ-ով սահման-

ված ջրաքանակը 24207 լ/վ): Այս տարվա ընթացքում 584 խորքային հորից փաստացի գունարային ջրաէլքը կազմել է մոտ 23973 լ/վ և այն նվազեցվել է՝ հասցվելով մոտ 22499 լ/վ ջրաքանակի, որը 15 չգործող ձկնաբուծական տնտեսությունների 18 խորքային հորերը փականային ռեժիմի բերելու և 3 խորքային հոր կոնսերվացնելու արդյունք է: Նշվել է, որ ձկնաբուծական նպատակով օգտագործվող փաստացի ջրաքանակը շուրջ 21607 լ/վ է, ինչը տարեկան կազմում է մոտ 681.4 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ: 582 խորքային հորից կատարվել է 230 ինքնաշատրվանող խորքային հորի վրա տեղադրված փականների կնքում և հաշվառում, նախկինում կնքված 115 խորքային հորեր ևս մեկ անգամ հաշվառվել են:

**• Նոյաստել բիզնեսի զարգացմանը՝ ջուրն արդյունավետ օգտագործելու դայնամոլ**

Սկիզբը էջ 4 |

2017 թվականի հունվարի 1-ից առ այսօր խորքային հորերի փակման համաժամեցումն է, լուծարման և կոնսերվացման արդյունքում խնայվել է շուրջ 140 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ: Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է կատարվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որով առաջարկվում է ըստ գույքագրման արդյունքների՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակները գերազանցող փաստացի արդյունահանված ջրի ծավալի համար 2018թ. հունվարի 1-ից կիրառել սահմանված դրույքաչափի (1մ<sup>3</sup> համար 0.5 ՀՀ դրամ) եռապատիկը, իսկ ապօրինի ջրօգտագործման նկատմամբ՝ տասնապատիկը: Առաջարկի իրագործման դեպքում՝ պետական բյուջե կվճարվի հավելյալ՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակները գերազանցող փաստացի արդյունահանված ջրի ծավալի դեպքում՝ 110 մլն դրամ և ապօրինի ջրօգտագործման դեպքում՝ 66 մլն դրամ: Վարչապետ Կարապետյանը հանձնարարել է նախագիծը դնել շրջանառության մեջ: Կառավարության ղեկավարն անհ-

րաժեշտ է համարել շարունակել Արարատյան դաշտավայրում բնապահպանական իրավիճակի բարելավմանը և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված քայլերը, մասնավորապես, խորքային հորերի կոնսերվացման ու փակման տեղադրման գործընթացը: Կարեն Կարապետյանը հանձնարարել է պետական բյուջեից հատկացնել անհրաժեշտ միջոցներ՝ ջրաչափիչ սարքեր տեղադրելու նպատակով: «Մենք չենք ցանկանում խեղդել բիզնեսին, սակայն անհրաժեշտ է վերջինիս առավելագույնս մոտիվացնել, որպեսզի ջուրն արդյունավետ օգտագործի», - ընդգծել է վարչապետը՝ ավելացնելով, որ պետք է բոլոր խնդիրներին տալ հնարավորինս պարզ լուծումներ: Խորհրդակցության ընթացքում ներկայացվել է նաև «Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը:

**Իրավիճակը գնահատելուց հետո կներկայացվեն հրդեհների կանխարգելման և դրանց դեմ դայնամոլի առաջարկներ**

**ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը հանդիպել է Միացյալ Նահանգների անտառային ծառայության աշխատակիցներին**

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը հանդիպել է Հայաստան ժամանած Միացյալ Նահանգների անտառային ծառայության «Կլյուված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խմբի անդամներին՝ ծառայության գյուղատնտեսության վարչության հրդեհների և ավիացիայի կառավարման գրասենյակի հրդեհների գծով մասնագետ, էկոլոգ Ջեյն Քրոֆտին և ծառայության տարածաշրջանային համակարգող Մարիամ Թևազյանին, որոնց ուղեկցել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տնտեսական և առևտրի գծով պատասխանատու Ռաֆայել Սամբուն:

Ընդհանրապես հայտնելով ԱՄՆ կառավարությանը և Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը՝ անտառային հրդեհների ժամանակ աջակցություն ցուցաբերելու կոչին



արագ արձագանքելու համար՝ նախարարի տեղակալը ներկայացրել է ակնկալվող աջակցության հիմնական ուղղությունները: Խաչիկ Հակոբյանը կարևորել է հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների կանխարգելման և արագ արձագանքման նպատակով կարողությունների մեծացումը:

Միացյալ Նահանգների անտառային ծառայության տարածաշրջանային համակարգող Մարիամ Թևազյանը տեղեկացրել է, որ Հայաստան ժամանած աշխատանքային խմբերը տեղում իրավիճակը գնահատելուց հետո կներկայացնեն հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի առաջարկներ, որոնց մի մասը հնարավոր կլինի իրականացնել պետության միջոցներով, իսկ որոշ մասի համար անհրաժեշտ կլինի արտաքին տեխնիկական աջակցություն: Նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը տեղեկացրել է, որ առաջիկայում Հայաստանի անտառածածկ տարածքների ամբողջական կառավարումը հանձնվելու է ՀՀ բնապահպանության նախարարությանը և աղետների դեմ համալիր արդյունավետ գործողություններ իրականացնելու համար կարևորել է տեղերում հրդեհների կառավարման պլանների մշակումը, տեխնիկական վերազինումը և տեսուչների վերապատրաստումը:

## Լավ հեռանկարներ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում լեհական առաջատար ձեռնարկությունների հետ



**ՀՀ** բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը հանդիպել է Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Սարեկ Ռեշուտային՝ վերջինիս խնդրանքով: Կողմերը քննարկել են այս տարի նոյեմբերի 6-17-ին Բոննում տեղի ունեցած ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ՎՓՇԿ) 23-րդ համաժողովի շրջանակներում Հայաստանի և Լեհաստանի պատվիրակությունների հանդիպումների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը: Դիտարկվել են տեղեկատվական տեխնոլոգիայի ոլորտում լեհական առաջատար ձեռնարկությունների հետ բնա-

պահպանության ոլորտում Հայաստանի համագործակցության մեխանիզմները: ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը, շեշտելով, որ Հայաստանում զարգացած է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ առաջարկել է խթանել երկու երկրների համապատասխան կազմակերպությունների համագործակցությունը: ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալը դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատարին տեղեկացրել է Հայաստանի կառավարության նախաձեռնած «Բնապահպանական ծրագրեր» պարտքի դիմաց» գործընթացի մասին և առաջարկել այդ ուղղությամբ Լեհաստանի ունեցած հաջողված փորձին ծանոթանալու նպատակով համապատասխան մասնագետների հետ հանդիպում կազմակերպել: Հանդիպման ավարտին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ բնապահպանության նախարարության և Լեհաստանի շրջակա միջավայրի նախարարության միջև համագործակցության հուշագրի ստորագրմանն առնչվող հարցերին, որի վերաբերյալ նախնական համաձայնությունը ձեռք էր բերվել երկու երկրների բնապահպանական գերատեսչությունների ղեկավարների հանդիպման ժամանակ:

## Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի հանդիպումները Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ



**ՀՀ** բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը մի շարք հանդիպումներ է ունեցել Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նա հանդիպել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ Ռաիմուն Յելեին: Հանդիպման ժամանակ քննարկվել են կազմակերպության հետ համագործակցության հեռանկարները: Ռաիմուն Յելեն, «Կանաչ կլիմայի» հիմնադրամի լիազոր ազգային մարմնին՝ ՀՀ բնապահպանության նախարարությանն է ներկայացրել ծրագրի նախագծի հայեցակարգ, որով նախատեսվում է մշակել Հայաստանի անտառների կառավարման և վերականգնման լայնամասշտաբ ծրագիր:

Գերմանական KfW բանկի հայաստանյան ներկայացուցչության նախաձեռնությամբ բնապահպանության նախարարի առաջին տեղակալը հանդիպել է գերմանական ֆինանսական համագործակցության կազմակերպության ներկայացուցիչ Ալվարո Բեռնիեին: Քննարկվել են գերատեսչության հետ համագործակցության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, ստորագրվել է հուշագիր: Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Քրիստեն Հանդի հետ նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը քննարկել է Հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական ազդեցությունների գնահատման ընթացիկ և նոր նախատեսվող ծրագրերը: Է. Գրիգորյանը, մասնակցել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում գործողությունների պլանի քննարկմանը, որը վերանայվել է՝ համապատասխանեցնելով կառավարության միջոցառումների ծրագրին և գերակայություններին: Ծրագրի իրականացման թիմին առաջարկվել է բոլոր գործողությունների համար ներկայացնել հստակ չափորոշիչներ և նախատեսվող բյուջեների վերաբերյալ տվյալներ:

# Լրացուցիչ ջանքեր՝ անսառային սարածփների վրա ճնշումը թուլացնելու և ապօրինի ծառահատումների դեմն առնելու համար



**Բ**նապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Ջակոբյանն ընդունել է Հայաստան ժամանած ՌԴ Վոլոգդայի մարզի պատվիրակության անդամներին՝ մարզի անտառային համալիրի ղեկավար Ռոման Մարկովին, «Վոլոգդայի անտառային արդյունաբերողներ» բաժնետիրական ընկերության տնօրեն Ալեքսեյ Ալեքսեևին և վերջիններիս ուղեկցող Հայաստանում Ռուսաստանի առևտ-

րային ներկայացուցչության խորհրդատուներ Ստանիսլավ Պիվենին ու Իգոր Զինովկին:

Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ:

Հանդիպմանը քննարկվել են Հայաստան ՌԴ Վոլոգդայի մարզից փայտի և բրիկետների ներկրման, ինչպես նաև փայտանյութից տեղում բիովառելիք արտադրելու հնարավորությունները, ինչը կնվազեցնի Հայաստանի անտառային տարածքների վրա ճնշումը և ապօրինի ծառահատումների դեպքերը:



**Թ**բիլիսիում անցկացվել է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պետական լիազոր մարմինների, բնության հատուկ պահպանվող տարածքների և մասնավոր հատվածի ազգային և անդրսահմանային զբոսաշրջային գործունեությունը զարգացնող միջոցառումներ քննարկում: Քննարկմանը մասնակցել են վերոնշյալ երկրների համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

## Հարավային Կովկասում էկոտուրիզմը կզարգանա նաև համաճեղ մոտեցումների շնորհիվ



ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Սարգսյանի կարծիքով, այն լավ հարթակ էր առկա խնդիրների վերծանման, ինչպես նաև շահավետ առաջարկների և առհասարակ էկոտուրիզմը հետագա զարգացման համար: Հանդիպումը կազմակերպվել էր Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության նախաձեռնությամբ: Հանդիպման արդյունքում քննարկվել են որոշ էկոտուրիստական երթուղիներ և կազմվել են անդրսահմանային էկոտուրիզմի զարգացման նախնական ծրագրեր: Կողմերը փոխանակվել են մտքերով, առաջարկներով և մյուս հանդիպման ժամանակ հանդես կգան արդեն իսկ կոնկրետ առաջարկներով, որոնք խթան կհանդիսանան Հարավային Կովկասում էկոտուրիզմը զարգացնելու համար:

## Տեսուչների իրազեկվածության բարձրացմանը նպաստակամ դրած աշխատաժողով Օրիուս կենտրոնում



Երևան քաղաքի Օրիուս կենտրոնում կայացել է աշխատաժողով, որին մասնակցեցին ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Երևան քաղաքի և տարածքային բաժինների տեսուչները, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի տեսուչները: Աշխատաժողովը նպատակաուղղված էր տեսուչների իրազեկության բարձրացմանը՝ միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը և քիմիական նյութերի և թափոնների կառավարումն ապահովող օրենսդրության կատարելագործման նպատակով դրանում կատարված փոփոխություններին ծանոթանալու համար:

Աշխատաժողովում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ տիկին Ա. Ալեքսանդրյանը ներկայացրեց «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի, «Վտանգավոր թափոնների

անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի և Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիաների դրույթները և նշեց դրանց կատարման վերաբերյալ տեսչական մարմինների վերահսկողության իրականացման խնդիրները: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց նաև թափոնների կառավարման ոլորտին վերաբերող 2017 թվականին ընդունված օրենսդրությունը, մասնավորապես ընդերքօգտագործման արդյունքում առաջացող թափոնների կառավարմանը և վերամշակմանը ներկայացվող պահանջները:

Առաջարկ եղավ նման իրազեկության բարձրացման խորհրդակցությունները պարբերաբար անցկացնելու վերաբերյալ:

## Առաջնորդության դորոցի ուսանողները Արծվիկ Մինասյանի աշխատասենյակում

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել Առաջնորդության դպրոցի ուսանողների հետ: Հանդիպումն անցկացվել է նախարարի աշխատասենյակում՝ «Նախարարի աշխատանքային օրը» խորագրի ներքո: Արծվիկ Մինասյանը մանրամասն ներկայացրել է նախարարի աշխատանքային գրաֆիկը, ծանոթացրել աշխատասենյակում ներկայացված պետական խորհրդանիշներին, անձնական իրերին: Ուսանողները ծանոթացել են պետական պաշտոնյայի գործունեության, փաստաթղթաշրջանառության վարման, աշխատանքային առօրեայի մանրամասներին: Ուսանողների հետ հարցուպատասխանի միջոցով անմիջա-



կան գրույց է ծավալվել: Ապագա առաջնորդներին Արծվիկ Մինասյանը հաջողություններ է մաղթել, շրջակա միջավայրի ոլորտի մասնագետներին՝ հրավիրել համագործակցության: Առաջնորդության դպրոցի ուսանողների հետ նախարարը հանդիպել էր նաև տարեսկզբին ներկայացնելով բնապահպանական ոլորտի հիմնահարցերը և որպես պաշտոնյա՝ սեփական փորձն ու ձեռքբերումները:



## ԷկոմՇակութային գիտակցությունը բնադահողանական հիմնախնդիրների լուծման հենասյունն է

### Մեկնարկել է «Հանուն բնության պահպանության» խորագրով բարեգործական ցուցահանդես-վաճառք

Դեկտեմբերի 14-ին Հայաստանի բնության պետական թանգարանում Բնապահպանության նախարարության հովանավորությամբ տեղի է ունեցել ՀՀ նկարիչների միության կողմից կազմակերպված «Հանուն բնության պահպանության» բարեգործական ցուցահանդես-վաճառք: Ցուցահանդեսին մասնակցել են Բնապահպանության նախարարության պատասխանատուներ, ՀՀ նկարիչների միության անդամներ, ոլորտի այլ ստեղծագործողներ, մասնագետներ և թանգարանի այցելուներ: Ողջունելով հյուրերին՝ ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեղանյանը բարձր է գնահատել նմանատիպ միջոցառումների կարևորությունը և նշել ՀՀ բնապահպանության նախարարության և այլ ոլորտներում ստեղծագործողների, միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության մասին: «Շնորհակալություն են հայտնում ցուցահանդեսի նախաձեռնող ՀՀ նկարիչների միությանը համագործակցության և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տնօրինությանը՝ նկարիչների միության անդամների աշխատանքներին աջակցելու համար», - նշել է նախարարի խորհրդականը: Ցուցադրված կտավներում, նկարչի վրձնի նրբաճաշակությամբ ներկայացված է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարուստ կենսաբազմազանությունը: Կազմակերպիչների խոսքով՝ ցուցահանդեսի հիմնական նպատակը էկոմշակույթի ձևավորման միջոցով հասարկությանը բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը մասնակից դարձնելն է: Ցուցահանդես-վաճառքից ստացված զումարի մի մասն ուղղվելու է արգելոցին՝ հարուստ կենսաբազմազանության պահպանման միջոցառումների իրականացմանը նպաստելու համար: Բարեգործական ցուցահանդես-վաճառքը շարունակվեց 5 օր:



Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի  
 Խմբագիր՝ Մանվել Սևրջյան  
 Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
 Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
 011 818 517